ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ.

Թիֆլիսի դատական պալատը մայիսի 2-ին քննում էր Ախալցխայի Հայոց ս. Փրկիչ եկեղեցու կալուածների սեփականութեան համար Թիֆլիսի Կոնսիստորիայի կողմից դպրոցական իշխանութեան դէմ յարուցած դատը։ Դատական պալատը հաստատեց նահանգական դատարանի վճիռը, որով ապօրինի է ճանաչուած յիշեալ կալուածների գրաւումը դպրոցական իշխանութեան կողմից։ Նորա ձեռքից, հետեւաբար, պիտի առնուին այդ կալուածները և յանձնուին սեփականատիրոջ — Ախալցխայի Հայոց ս. Փրկիչ եկեղեցուն։ Պալատում դպրոցական իշխանութեան շահերը պաշտպանում էին, Պետերբուրգից եկած՝ լուսաւորութեան նախարարութեան առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Ա. Պ. Դաւէ և Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչ պ. Պերեվոզնիկով. իսկ Կոնսիստորիայի ներկայացուցիչն էր երդ. հաւ. պ. Մելիք—Ադամեան։

«Հանդէս ամսօրեայ»-ի մայիս թուի մէջ կարդում ենք. «Ներկայիւս կը ծանուցանեմք, թէ Ս. Քահանայապետն Լեոն ԺԳ. իւր հրամանագրովն (décret), զոր տուաւ Մարտի 31-ին 1903, հաճեցաւ անուանել Առաջնորդ Մխիթարեան Միաբանութեան Վիեննայ զԳերյարգելի Հ. Թադէոս Ծ. վարդապետ Թոռնեան, Ընդհանրական Աթոռակալի տիտղոսով և վեց տարուան տեւողութեամբ»։